<< Կրթություն առանց սահմանների >> ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

ՈՒՍՈՒՑԻՉ Հարությունյան Հասմիկ

Ղեկավար՝ Բաբաջանյան Վերոնիկա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ 4

Եզրակացություն 12

Օգտագործված գրականության ցանկ 13

Ներածություն

Թեմայի ընտրության հիմնավորումը – Թեմայի ընտրությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ վերջին տարիներին ավելի ու ավելի շատ թվով ծնողներ են դիմում առողջապահական հաստատություններ և հոգեբանական կենտրոններ՝ երեխաների մոտ առաջացած կարճատեսության, լսողության, շարժողական ֆունկցիաների խանգարման, ճարպակալման կամ հոգեբանական խնդիրների համար: Եվ այդ բոլոր խնդիրների արմատը գտնվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների չարաշահման մեջ:

Թեմայի արդիականությունը - Մանկական հոգեբաններն ու հոգեբույժները գտնում են, որ 21-րդ դարում երեխաների հիմնական հիվանդությունների պատճառը հեռուստացույցը և համացանցն են: Երեխայի վրա համացանցի բացասական ազդեցության խնդիրը հայտնվել է մանկավարժների, հոգեբանների, ծնողների ուշադրության կենտրոնում: Այդ բացասական հետևանքները կարող են արտահայտվել թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջության վրա:

Աշխատանքի նպատակն է պարզել, թե ինչ ազդեցություն են ունենում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները երեխաների հոգեբանական զարգացման վրա:

Աշխատանքի խնդիրներն են՝

- Խոսել համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների բացասական ազդեցությունից և այդ բնագավառում հետազոտողների կատարած ուսումնասիրությունների արդյունքներից:
- Նկարագրել այն վտանգավոր հետևանքները, որոնք կարող են ունենալ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները երեխաների ֆիզիկական և հոգևոր զարգացման վրա:

Հետազոտության օբյեկտը համացանցն է և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները:

Հետազոտության սուբյեկտը երեխաներն են, ովքեր մշտապես օգտվում են համացանցի ընձեռած հնարավորություններից տեղեկատվություն ստանալու համար:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

Հասարակության մտածողության փոփոխության գործում մեծ դեր ունի հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կամ մուլտիմեդիան: Այս համակարգը իրենից ենթադրում է տեքստերի, պատկերների, ձայնի ու կադրի ներմուծում տարբեր կետերից դեպի բաց և հասանելի համացանց: Մուլտիմեդիայի զարգացման հետ մեկտեղ փոխվում է նաև մշակույթը, քանի որ այն ձևավորվում է հաղորդակցման արդյունքում:

Ամեն օր մենք ստանում ենք նոր տեղեկություններ, որոնց աղբյուրները բազմազան են: Տեղեկությունների աղբյուր կարող են լինել հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերը, համացանցը, գրքերը, և նույնիսկ՝ գովազդային վահանակներն ու պատերին փակցված հայտարարությունները:

Այս ամենը մեր կյանքի անբաժան մասն են կազմում: Մարդիկ ապրում են, արարում և ստեղծում նորություններ: Իսկ այդ նորությունները մեզ են հասնում մեդիայի ավանդական և նոր միջոցների շնորհիվ:

՝Մեդիան սոսկ տեղեկությունների շրջանառման միջավայր չէ. այն ձևավորում է հասարակական կարծիք, ազդում է մարդկանց, հատկապես երեխաների ու պատանիների վարքագծի, որոշումների, աշխարհայացքի և նախասիրությունների վրա՝[1]:

Մեդիան կարող է լուրջ ազդեցություն ունենալ հասարակության վրա որևէ խնդիր լուծելու հարցում: Սոցիալական հիմնախնդրի բնութագրումը, որպես առարկա, վերջին մի քանի տարիների ընթացքում իր արտահայտությունն է գտնում զանգվածային լրատվամիջոցներում, իր վրա է հրավիրում փորձագետների ուշադրությունը:

Համակարգչի և համացանցի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ: Նախ համակարգչի առջև շատ

[1] Մեդիագրագիտություն, Ձեռնարկ, Երևան, Ինտերնյուս, 2013, էջ 6

ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ ընդհանուր թուլություն և հոգնածություն է դրսևորվում, քնի խանգարումներ: Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողնել հոգեկան գործընթացների վրա (մասնավորապես երեխայի հիշողությունն է վատացում, դպրոցում դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում), հոգեվիճակների, անձնային հատկությունների ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում: Առավել շատ են հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձևավորման բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ:

Ինֆորմացիոն աշխարհն իր բոլոր դրսևորումներով ազդում է մարդու արժեքային համակարգի, արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների, նպատակների ու ցանկությունների, երազանքների ու իդեալների ձևավորման, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա:

Այսօր ժամանակակից աշխարհում տեղի է ունենում գլոբալ տեղեկատվական հասարակության ձևավորում, որի հիմքը համացանցն է: 21-րդ դարի սկզբին այն արդեն միավորել է մի քանի միլիարդ օգտվողների, և ամեն տարի նրանց թիվն աճում է: Հավանականություն կա, որ առաջիկայում երկրագնդի բնակչության մեծ մասը կսկսի համակարգված տեղեկատվության ստանալ, ստեղծել և տարածել հենց համացանցի միջոցով:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների տարածումն անխուսափելիորեն ազդում է հասարակության զարգացման, անհատի ձևավորման վրա և ձևավորում է նրա տեղն ու դերը ժամանակակից հանրության մեջ:

Վ. Ա. Պլեշակովը առանձնացնում է 5-րդ տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխությունը, որը կապված է թվային, բջջային և ինտերնետ տեխնոգլոգիաների հետ[2]:

[2] Плешаков В.А. Киберонтологическая концепция развития личности и жизнедеятельности человека XXI века и проблемы образования // Вестник Православного Свято-Тихоновского гуманитарного университета. Серия 4: Педагогика. Психология. – 2014. – № 4 (35). – С. 11

Նրա կարծիքով, եթե մարդկության զարգացումը դիտարկենք տեղեկատվական հեղափոխության տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ արտասահմանում սկսվել է զարգացման նոր փուլ՝ մարդկության կիբեռսոցիալականացման դարաշրջան:

Կիբերսոցիալականացումը անհատի սոցիալականացումն է կիբերտարածությունում, այն անհատի ինքնաճանաչման կառույցի որակական փոփոխությունների գործընթացն է և անհատականության պահանջմունքամոտիվացիոն բնագավառը, որը ծագում է մարդու կողմից ժամանակակից տեղեկատվական , հաղորդակցման, թվային և համակարգչային տեխնոլոգիաների կիրառումից, յուրացումից և անձնական կենսագործունեության շրջանակներում դրանից ծնված մշակույթի վերարտադրությունից[3]:

Երեխաների և դեռահասների վրա տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության մասին խոսելիս հարկ է հիշել որոշ հեղինակների աշխատություններ:

Մասնավորապես, Մարշալ Մակլյուենի 'Մեդիա հասկացություն' գրքում վերլուծվում է մարդու և հասարակության տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը: Հաղորդակցական միջոցներն իրենց մեջ ունեն ոչ միայն բովանդակություն, որն օգտագործում է դրանցից օգտվող անհատը, այլ իրենք իրենցով ձևավորում են մարդկանց միջև սոցիալական կապերի բնույթը: Այսպիսով, Մ. Մակլյուենը գալիս է այն եզրակացության, որ հաղորդակցման յուրաքանչյուր միջոց ինքն իրենով հաղորդակցություն է: Դրա համար էլ տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատանքում դրանք պետք է ընդունել ոչ թե միայն բովանդակություն, այլ որպես հաղորդակցման միջոց, ինչպես նաև հասկանալ այն մշակութային միջավայրը, որում այն գործում է:

Մ. Կաստելսը նույնպես գտնում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխությունը իր արտահայտությունն է գտնում սոցիալական բնագավառում: Նրա աշխատանքներում ներկայացվում է այն գաղափարը, որ տեխոլոգիական զարգացման խնդրում հասարակությունը կամ տեխնոլոգիան փոխազդում են մեկը

[3] Плешаков В.А. Теория киберсоциализации человека. Монография. – М.: МПГУ, «Homo Cyberus», 2011., С. 24

մյուսի վրա[4]: Հեղինակը հանգում է այն մտքին, որ՝տեխնոլոգիան հասարակությունն է և չի կարող հասկացվել կամ նկարագրվել առանց տեխնոլոգիական գործիքների[5]՝:

Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Համացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով, էրոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակներին: Չի բացառվում, որ երեխաները ևս նմանօրինակ ինֆորմացիաի հանդիպեն: Նախադպրոցական տարիքը, առավել ևս դեռահասության տարիքը սեռային ինքնագիտակցության, սեռական նույնականության ձևավորման, սեռային դերերի ու բնութագրերի յուրացման կարևոր շրջաններն են: Սեռերին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկատվության և տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների անարգելք ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումները, բացասաբար ազդել սեռական հասունացման ընթացքի վրա, բացասական հետևանքներ ունենալ տարիքին բնութագրական տվյալ ոլորտի նկատմամբ դրսևորվող գերուշադրության ու հետաքրքրության վրա, ընդհանրապես չձևավորված սեռական, սոցիալական, հոգեկան ոլորտների զարգացման ընթացքների վրա: Դեռահասների, պատանիների ու երիտասարդների մոտ կախվածություններ են առաջանում սոցիալական ցանցերից, որոնք դարձել են հաղորդակցման այլընտրանքային ձևեր, ծանոթության և շփման հասանելի միջոցներ:

Բուռն երևակայության շրջան համարվող մանկական տարիքում համակարգչային խաղերն իրենց գունավոր աշխարհներով, հերոսներով, հաղթանակներով ու պարտություններով, հետաքրքիր վիրտուալ մրցակիցներով կարող են ամբողջովին կլանել երեխային: Շատ ավելի լուրջ հետևանքներ է ունենում այն փաստը, որ շատ խաղերում ագրեսիվ վարքի ձևեր ու մոդելներ են դրսևորվում, որոնք երեխաներն առանց գիտակցական վերաբերմունքի ու

[4] Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. – М.: ГУ ВШЭ, 2000.
[5] Տես նույն տեղում, էջ՝ 21

գնահատականի նմանակման ուժով յուրացնում են: Խաղալով երեխաները նույնանում են իրենց վիրտուալ կերպարի հետ՝ դառնալով ագրեսիվ, կոնֆլիկտային, դյուրագրգիռ ու նյարդային: Տուժում են ծնողների հետ հարաբերությունները, հատկապես երբ նրանց փորձում են հեռացնել, կտրել համակարգչից: Արդյունքում՝ երեխաների մոտ կարող է ձևավորվել այն դիրքորոշումը, որ եթե վիրտուալ աշխարհում կարելի է, թույլատրելի է սպանել, կործանել ու քանդել, ապա դա կարելի է անել նաև իրական աշխարհում: Դրանք կարող են նաև մանկական վախերի առաջացման պատճառներից մեկը լինել: Չէ որ երեխան դեռ չի կարող տարբերել արվեստն ու իրականությունը: Մեծ մասամբ երեխաների մոտ հոգեբանական կախվածություն առաջանում է դերային խաղերի նկատմամբ: Համակարգչային դերային խաղերում երեխան իր վրա համակարգչային հերոսի դերն է ստանձնում, այն պարտադրում է խաղացող երեխային հանդես գալ կոնկրետ կամ երևակայվող հերոսի դերում: Հենց այս խաղերի ժամանակ է տեղի ունենում երեխայի ամբողջական խորը ներգրավումը խաղի մեջ: Երբեմն, անգամ երևակայության մեջ շարունակում են կարծես թե գործել համակարգչային հերոսի անձի դիրքերից՝ գտնվելով իրական կենսական իրադրություններում:

Այսպիսով, նոր էլեկտրոնային հաղորդակցման համակարգը հիմնային կրթության մշակույթի կրողն է: Մուլտիմեդիայի կարևորագույն բնութագրիչն այն է, որ տվյալ հաղորդակցական համակարգն իր մեջ ներառում է մշակութային արտահայտության գոյություն ունեցող բոլոր տեսակները;

Տեղեկատվական տեխնոլոգիաների լայնամասշտաբ օգտագործումը ցույց է տալիս, որ օգտագործողների (հատկապես՝ երեխաների և դեռահասների) հոգեբանությունը փոփոխության է ենթարկվում շատ կարճ ժամանակահատվածում :

Երեխաների հոգեբանական բարօրությունը հասարակության կյանքի կարևորագույն ցուցանիշներից է, որն արտահայտում է ոչ միայն դրությունն այդ պահին, այլև ապագայում դրա կանխատեսումը:

Անհատի կենսագործունեությունը կիբերտարածությունում հնարավորություն է տալիս օգտագործել տեղեկատվական-հաղորդակցական, համակարգչային,

թվային և ցանցային տեխնոլոգիաների սոցիալականացման, դաստիարակչական ու կրթական հնարավորությունները: Մինչդեռ, համացանցում գոյություն ունեն նաև գործոններ, որոնք բացասաբար են անդրադառնում սոցիալականացման գործընթացին: Օրինակ՝ տարիքին ոչ համապատասխան սեռական բնույթի կայքերի հասանելիությունը, կոշտ և կոպիտ վարմունք արտահայտող խաղերով տարվածությունը և այլն:

Երեխաների կիբերսոցիալականացման խնդրի դիտարկումը հարկ է սկսել Դ. Բ. Էլկոնինի հոգեբանության զարգացման տեսությունից[6]: Համաձայն այդ տեսության՝ երեխայի զարգացման յուրաքանչյուր փուլ բնութագրվում է առանձին գլխավոր գործունեությամբ:

Մի շարք հետազոտողներ գտնում են, որ ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործումն ու համացանցը բացասաբար են ազդում ուղեղի ֆունկցիաների վրա:

Ամերիկացի հասարակագետ Նիկոլաս Քարը իր «The Shallows: What the Internet is Doing to Our Brains»[7] գրքում հետազոտություն է անցկացնում, որը ցույց է տալիս, որ համացանցի օգտագործումը բացասաբար է անդրադառնում հիշողության և կենտրոնացման կարողության վրա:

Բրիտանիայի ուսուցիչների ասոցիացիան նշում է երեխաների և դեռահասների կողմից նոր թվային տեխնոլոգիաների օգտագործման վտանգների մասին՝ կարևորելով այն հանգամանքը, որ դեռ փոքր տարիքից երեխաների մոտ խանգարվում է մանր մոտորիկան, ինչը դեռահասության տարիքում հանգեցնում է բազմաթիվ դժվարությունների[8]: Այն երեխաները, որոնք ժամեր են անցկացնում համակարգչի առջև կամ հեռախոսով խաղալիս, կորցնում են մատների շարժունակությունը և հիշողությունը: Դրա հետ կապված ուսուցիչները նկատում են, որ երեխաները դանդաղ են սովորում գրել, երբեմն նաև չեն կարողանում ընդհանրապես արտագրել տեքստը:

---

[6] Ракитов А.И. Философия компьютерной революции. – М.: Политиздат, 1991.
[7] Тоффлер Э. Третья Волна. – М.: АСТ, 2010.
[8] Дорота Лосевич. Юные безграмотные. [Электронный ресурс] / Режим доступа: http://inosmi.ru/world/20150118/225633049.html

Բացի այդ, համացանցի և տեխնոլոգիական միջոցների օգտագործումը հանգեցնում է հիշողության և ուշադրության կորստի դեռահասների մոտ: Համացանցում տեղ գտած հասանելի տեղեկավությունը շեղում է նրանց ուշադրությունը և չի թողնում կենտրոնանալ դասերի վրա: Հատկապես, եթե դեռահասներին թույլատրվում կամ հաջողվում է հեռախոսը դպրոց տանել: Դա էլ կրթության հետ կապված դժվարություններ է առաջացնում:

Սովորաբար, համակարգչային կախվածությունը հստակ արտահայտվում է 9-10 տարեկան երեխաների մոտ: Հենց համակարգչային դերային խաղերն են յուրաքանչյուր երեխայի համար հոգեբանական կախվածության մեծ վտանգ ներկայացնում: Ցանկացած տիպի դերային խաղից երեխային դժվար է կտրվելը, իրական աշխարհը վերջինիս հետ համեմատած անգույն է ու անհետաքրքիր: Ամեն դեպքում կանխարգելման ուղղությամբ պետք է տարվեն աշխատանքներ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքներում: Մեծ մասամբ վաղ տարիքում խաղային կախվածությունն է տարածված, իսկ համացանցային կախվածությունը՝ ավելի մեծ տարիքում: Ծնողները չեն կարող լիովին արգելել երեխային համակարգչից օգտվել, քանի որ այս դեպքում երեխան իրեն ընկճված, տարբերվող կզգա այլ երեխաների մեջ: Առանց սահմանափակումների համակարգչից օգտվելը կհանգեցնի այլ զբաղմունքների նկատմամբ հետաքրքրության կորստի, շփման շրջանակի նեղացման, ծնողների հետ շփումների աստիճանական կորստի, իրական կյանքում ակտիվության նվազման, սահմանափակումների նկատմամբ դրսևորվող կամակորության, նյարդայնության: Խաղը դադարեցնել դժվար է, քանի որ հաղթելով ցանկանում են այն ամրապնդել, պարտվելով՝ հաղթել, այսպես դժվար է կտրվել խաղից: Հոգեբանները, մանկավարժները ընդհանրապես խաղերին դեմ չեն , խաղն անհրաժեշտ է երեխային զարգանալու համար, դեմ են կոնկրետ տեսակի խաղերին, որոնք խաթարում են հոգեկանը: Ծնողական արգելքը պետք է հիմնավոր լինի:

Որոշ մասնագետներ գտնում են, որ համացանցի և թվային տեխնոլոգիաների կիրառումը հոգեբանական ֆունկցիաների խանգարումներ չի առաջացնում, այլ ձևավորում է փնտրելու և տեղեկատվությունը յուրացնելու կարողություն:

Բեթսի Սփարրոուի հետազոտություններում[9] ապացուցվում է, որ մարդը բավականին դժվար է հիշում այս կամ այն տեղեկությունը, երբ իմանում է, որ այն հիշվում է համակարգչում: Հետազոտվողները բավականին հեշտ են հիշում տեղեկատվություն ստանալու ճանապարհը, բայց դրա բովանդակությունը չեն հիշում: Բայց հարկ է նշել, որ դրա պատճառ դառնում են ոչ թե ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, այլ դրանց չարաշահումը:

[9] Sparrow B., et al. Google Effects on Memory: Cognitive Consequences of Having Information at Our Fingertips. / Science 333, 776 (2011).

Եզրակացություն

Ուսումնասիրելով համացանցի և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների ֆիզիկական և հոգեբանական զարգացման վրա եկանք այն եզրակացության, որ.

1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները բավականին հեշտացնում են կրթական գործընթացը, բայց ունեն նաև բացասական հատկանիշներ:
2. Դրանք ազդում են երեխաների ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան զարգացման վրա՝ թուլացնում են հիշողությունը, թույլ չեն տալիս կենտրոնանալ և այլն:
3. Առանց հսկողության մնացած երեխաները օգտվում են նաև այն կայքերից, որոնք նախատեսված են միայն մեծահասակների համար և ունենում են հոգեբանական լուրջ խնդիրներ:
4. Համակարգչի առջև ժամեր անցկացնող երեխան ունենում է տեսողության հետ կապված խնդիրներ:
5. Չի զարգանում երեխաների մանր մոտորիկան:

Այս և այլ խնդիրներից խուսափելու համար խորհուրդ է տրվում հիշել հետևյալը՝

- Անհրաժեշտ է համակարգչում ծրագրային այնպիսի ապահովություն ունենալ, որը ծնողական հոսկողության դերը կապահովի:
- Ցանակալի է, որ համակարգիչը երեխայի սենյակում չլինի, որպեսզի երեխան չգայթակղվի:
- Խորհուրդ չի տրվում երեխային լիովին ազատություն տալ համակարգչային խաղեր ընտրելիս,
- որոշ խաղեր անհրաժեշտ է լիովին բացառել:
- Եթե ամեն դեպքում կախվածություն առաջացել է, պետք է գործել համառորեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մեդիագրագիտություն, Ձեռնարկ, Երևան, Ինտերնյուս, 2013,
2. Sparrow B., et al. Google Effects on Memory: Cognitive Consequences of Having Information at Our Fingertips. / Science 333, 776 (2011).
3. Дорота Лосевич. Юные безграмотные. [Электронный ресурс] / Режим доступа: http://inosmi.ru/world/20150118/225633049.html
4. Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. – М.: ГУ ВШЭ, 2000.
5. Плешаков В.А. Киберонтологическая концепция развития личности и жизнедеятельности человека XXI века и проблемы образования // Вестник Православного Свято-Тихоновского гуманитарного университета. Серия 4: Педагогика. Психология. – 2014. – № 4 (35).
6. Плешаков В.А. Теория киберсоциализации человека. Монография. – М.: МПГУ, «Homo Cyberus», 2011.,
7. Ракитов А.И. Философия компьютерной революции. – М.: Политиздат, 1991.
8. Тоффлер Э. Третья Волна. – М.: АСТ, 2010.